Կ-1194/-18.11.2025-ՏՏԳՇ-011 *Երկրորդ ընթերցում*

(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ուժը կորցրած ճանաչել 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63.2-րդ հոդվածի 6-րդ մասը:

Հոդված 2. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 12-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 12.1-ին մասով.

«12.1. Առեւտրի օբյեկտներում, հանրային սննդի օբյեկտներում, առեւտրի իրականացման վայրերում, շրջիկ առեւտրի կետերում, տոնավաճառներում (վերնիսաժներում), ցուցահանդես-վաճառքներում, շրջիկ առեւտրի կետերի միջոցով, շրջածախ առեւտրի միջոցով, ինչպես նաեւ բացօթյա առեւտրի իրականացման դեպքում՝ մանրածախ առեւտուր իրականացնելիս «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2.1-րդ մասով արգելվող ապրանքների առկայությունը կամ օտարումը՝

առաջացնում է նախազգուշացում խախտում թույլ տված պաշտոնատար անձի նկատմամբ:

Սույն մասով նախատեսված արարքը կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ հարյուրհիսնապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1-ին մասը «158-րդ հոդվածի 1-ին, 2-րդ» բառերից հետո լրացնել «12.1-ին» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ՝ սույն օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1194[1]-18.11.2025-ՏՏԳԾ-011/1) ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Հոդված 1. Ուժը կորցրած ճանաչել 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63.2-րդ հոդվածի 6-րդ մասը: ~~158-րդ հոդվածի 12-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 12.1-ին մասով.~~

Հոդված 2. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 12-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 12.1-ին մասով.

«12.1. Առեւտրի օբյեկտներում, հանրային սննդի օբյեկտներում, առեւտրի իրականացման վայրերում, շրջիկ առեւտրի կետերում, տոնավաճառներում (վերնիսաժներում), ցուցահանդես-վաճառքներում, շրջիկ առեւտրի կետերի միջոցով, շրջածախ առեւտրի

միջոցով, ինչպես նաեւ բացօթյա առեւտրի իրականացման դեպքում՝ մանրածախ առեւտուր իրականացնելիս «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2.1-րդ մասով արգելվող ապրանքների առկայությունը կամ օտարումը՝

առաջացնում է նախազգուշացում խախտում թույլ տված պաշտոնատար անձի նկատմամբ:

Սույն ~~հոդվածով~~մասով նախատեսված արարքը կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ հարյուրհիսնապատիկի չափով:»:

Հոդված ~~2~~3. Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1-ին մասը «158-րդ հոդվածի 1-ին, 2-րդ» բառերից հետո լրացնել «12.1-ին» բառով:

Հոդված ~~3~~4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ՝ սույն օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1194-18.11.2025-ՏՏԳԾ-011/0) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1194[1]-18.11.2025-ՏՏԳԾ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ				
1.	Կառավարություն	Հոդված 1, մաս 1	Հաշվի առնելով, որ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասն արդեն իսկ պարունակում է 31-րդ կետ՝ անհարաժեշտ է շտկել հերթական համարակալումը «31» թիվը՝ փոխարինելով «36» թվով:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	Կառավարություն	Հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը առաջարկվում է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, որի համաձայն՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:	Ընդունվել է	Ընդունվել է
	«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ				
3.	Կառավարություն	Վերնագիր	Օրենքի նախագծի վերնագրում «ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» բառից հետո լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	Հոդված 1	2025 թվականի նոյեմբերի 13-ի «ՀՀ ջրային օրենսգրքում	Ընդունվել է	Ընդունվել է

			փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-380-Ն օրենքի ընդունմամբ հանվել է հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում գործունեությունը փակ շրջանառու համակարգով իրականացնելու պարտադիր պահանջը: Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 6-րդ մասը: Փոփոխությունը սահմանել 1-ին հոդվածով:		
5.	Կառավարություն	Հոդված 1	Հոդված 1-ով նախատեսված փոփոխությունը սահմանել Հոդված 2-ով, որով Օրենսգրքի 158-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածը նախատեսվում է լրացնել նոր՝ 12¹-ին մասով, որի 3-րդ պարբերության «Սույն հոդվածով» բառերը առաջարկվում է փոխարինել «Սույն մասով» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դրանով վարչական պատասխանատվություն է նախատեսվում ոչ թե Օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված բոլոր արարքները, այլ միայն լրացվող նոր՝ 12¹-ին մասով նախատեսված արարքը կրկին կատարելու համար:		
6.	Կառավարություն	Հոդված 2	Պայմանավորված նոր հոդվածի ավելացմամբ «Հոդված 2» բառերը փոխարինել «Հոդված 3» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Կառավարություն	Հոդված 3	Առաջարկվում է «Հոդված 3» բառերը փոխարինել «Հոդված 4» բառերով՝ հաշվի առնելով, որ	Ընդունվել է	

			նախագիծը նախատեսվում է լրացնել նոր հոդվածով: Ինչպես նաև նոր լրացված Հոդված 1-ի համար ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:		